17218

ՎԻԿՏՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՌՈՒՆԱՎԸ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

Ֆ 14 2/18.
891.99-93
Վ
A Ш/15736

ՎԻԿՏՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՐՇԱՎԸ

(Մանկապարտեզային կյանքից)
Նկարները Հ. Շավարսի

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

БССР
Дзяржбібліятэка
імя В. І. Леніна
№ 10416

Վեր են կացել խոր քնից
Դուրս են յեկել տներից,
Արևի պես ժպտերես
Մանուկներն են յերգում, տես։

Մեղուների պես աշխուժ,
Մանուկները մեր անուշ
Գործարանի լայն բակում
Աղմկում են ու յերգում։



Հենց նույն բակում կա սարքած
Մի սղարան գորշ ներկված
Միշտ սղում են վերից վար
Ու թռչկոտում՝ անդադար։

Այստեղ ավազ, քար ու սել,
Այնտեղ սիրուն կարուսել
Լծած ձիեր, առույգ, ժիր,
Հասիր, նստիր ու քշիր։

Լուցկու փոքրիկ տուփերից
Պատրաստել են տնակներ
Ու գույնեգույն թղթերից
Բազմապիսի նկարներ։

Հոկտեմբերիկ Վինելը,
Հագին յերկար շինելը
Մանուկներին կարգ-կարգի
Կանգնացրել է մի շարքի։

Հոկտեմբերիկ Փայլակը
Քաշ է տալիս սայլակը
Սայլակի մեջ լցված լիք
Հազար ու մի խաղալիք։

Հոկտեմբերիկ Լևիկն ել
Եղիկի հետ է յեկել,
Ու միասին միատեղ
Պատրաստել են նետ, աղեղ։

Կպցրել են մի քարի
Բուրժուային ու ցարին
Նետում նետերը անվերջ
Ուղիղ նրանց աչքի մեջ։

Փոքրիկ Սեղան շիկահեր
Թռչկոտում է վար ու վեր,
Թելերն ուղղում, դրստում
Պարաշյուտ է պատրաստում։

Լայն քայլերով արագ, շուտ
Ձեռքին բռնած պարաշյուտ
Մի տիկնիկի կախ արած
Մեծ կտուրից նետեց ցած։

Ահա ավտոն է գալիս
Ինչու ճամբա չեք տալիս.
Ավտոյի մեջ է նստած
Սպարտակը՝ գլխաբաց։

Տո՛ւ, տո՛ւ տո՛ւ, տո՛ւ։
Ե՛յ, ճամփա տուր մեկնելու,
Զգուշ կացեք, յերեխե՛ք,
Վոր գնացքի տակ չընկնեք։

Գնացքը տա, տա,
Գծերը չիք, չիք
Մեքենավարն է ահա
Կարմրաթուշ մի աղջիկ։

Խաղալիքներ, մրգեր՝ շատ,
Ընկույզ, չամիչ ու փշատ
Տեսրակ, մատիտ թուղթ ու ծայր
Ներկեր պես-պես ու պայծառ։

Հետո սայլակ, փոքրիկ կառք,
Փայտե ձիեր առանց սարք
Սայլակի մեջ լցված լիք
Հազար ու մի խաղալիք։



Իսկ Եղիկը անկյունում,
Խաղարշային է նկարում,
Նրա կողքին շնիկը
Վեր է ցցել դնչիկը։

Կարոն կանգնել է զգաստ
Ու գոչում է մի՛շտ պատրաստ
— Մեկ յերկու, մեկ-յերկու,
— Ի՞նչ եք լռել, չեք յերգում։

*
* *

Գնացքը տա, տա,
Գծերը չիք, չիք
Մեքենավարն է ահա
Կարմրաթուշ մի աղջիկ։

Զորս կողմն աղմուկ, աղաղակ
Թախկ, չախկ, թախկ, չախկ,
Յեվ ձիերը նու, հա՜ նու՛
Չեն խանգարում մեկ մեկու։

Առաջինը տեղ հասավ
Նշված տեղից դեռ անցավ
Մեծ մոդելը լավ սարքած
Վրան տիկնիկն էր նստած։

— Դժվար, դժվար է այնքան,
Հասեք շտապ ոգնությյան,
Տեսեք Սոսն է վայր ընկել,
Ավտոն տակն է մնացել։

— Խաղալիքները թողնել
Հիմա պետք է լվացվել։
Զոփ են անում լվացվում
Ջրի շիթերն են ցայտում։



БССР
Дзяржбібліятэка
імя В. І. Леніна
№ 10411

Ամեն մեկը իր համար
Ունի, սրբիչ ու ոճառ
Փոշին մաքուր ու ճերմակ
Յեվ առանձին խոզանակ։

Հնչեց շչակը ուժգին,
Իմաց տվեց ամենքին,
Բանվորները ժրաջան,
Գործարանից դուրս յեկան։

Ամեն ծնող — հայր ու մայր
Թե մորաքույր, թե յեղբայր
Մանուկներին այն խնդուն
Առան, տարան դեպի տուն։

Ապրեք փոքրիկ բալիկներ —
Խորհրդային ծաղիկներ,
Ստալինյան մեր դարում
Ձեզ կյա՞նք, արև՛ ու գարուն։

A II/15236

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱՌԱՆՁՆԱՐԱՆ

Պատ. խմբագիր՝ Մ. Կորյուն
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

Գյավլիտի լիազոր՝ Կ. 4682. Հրատ. 4216.
Պատվեր 1261. Տիրաժ 4000.
Թուղթ 62×94. Տպագնական 1. մամ.
Մեկ մամուլում 30720 նիշ. Հեղինակային 3/4 մամ.
Հանձնված է արտադրության 16 նոյեմբերի 1937թ.
Ստորագրված է տպագրության 7 դեկտեմբերի 1937թ.
Գինը 60 կ.

Պետհրատի տպարան, Յերևան. Լենինի փող. 65.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0010846

26

ЦЕНА
II
№ 15736

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

Виктор Варданян
ПОХОД ИГРУШЕК
ГИЗ. Арм. ССР Ереван